ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Պետական պահպանության ծառայությունը ,որը գտնվում է ք. Երևան Պռոշյան փ. 1-ին փակուղի 20 հասցում, ստորև ներկայացնում է ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-10 ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում 10.03.2020թ. կնքված ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-10-1 գնման Պայմանագրում(այսուհետև՝ Պայմանագիր) 2020թ.-ի ապրիլի 8-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն)վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ:** Փոփոխությունն իրականացվել է հաշվի առնելով 06.04.2020 թվականին <<ԷԼԱԱՄՈԴԱ>> ՍՊԸ-ից ստացված գրությունը:

**Փոփոխության նկարագրություն և հիմավորում:** Հիմք ընդունելով 10.03.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-10-1 պայմանագրի 8.5 և 8.6 կետերը և 06.04.2020 թվականին <<ԷԼԱԱՄՈԴԱ>> ՍՊԸ-ից ստացված գրությունը, կողմերը համաձայնության եկան պայմանագրի չափաբաժիններով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և ապրանքների մատակարարման վերջնաժամկետ սահմանել 2020թ. մայիսի 15-ը:

Կողմերը եկան համաձայնության 10.03.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-10-1 պայմանագրի տեխնիկական բնութագիր- գնման ժամանակացույցը և վճարման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն Համաձայնագրի հավելված N 1-ի և հավելված N2-ի:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Կարեն Գասպարյանին:

Հեռախոս՝ 010 – 53-23-58

Էլ. Փոստ՝ karen-gasparyan89@mail.ru

Պատվիրատու՝ Պետական պահպանության ծառայություն

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-10-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք.Երևան

<<08>> <<04>> 2020թ.

Պետական պահպանության ծառայությունը, այսուհետ՝ <<Գնորդ>>, ի դեմս Պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալ Գ. Մովսեսյանի, որը գործում է <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի և Պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Հովսեփյանի, (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Հիմք ընդունելով 10.03.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-10-1 պայմանագրի 8.5 և 8.6 կետերը և 06.04.2020 թվականին «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ -ից ստացված գրությունը, կողմերը համաձայնության եկան պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և ապրանքների մատակարարման վերջնաժամկետ սահմանել 2020թ. մայիսի 15-ը:

1.2 Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 25.12.2020 թվականը:

### 2.Մատակարարման պայմանագիրը

2.1 Վաճառողը պարտավորվում է ապրանքը մատակարարել 10.03.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-10-1 պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան:

2.1.1 Կողմերը եկան համաձայնության 10.03.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-10-1 պայմանագրի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցը և վճարման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի և հավելված N2-ի:

## 3.Այլ պայմաններ

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է 10.03.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2020-10-1 պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմաններով նախատեսված իրավունքները և պարտականությունները, ապրանքի հանձնման և ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

Համաձայնագիրը կազմված է 2 էջից կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Պետական պահպանության ծառայություն<br>ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/հ 900011004497<br>ՀՎՀՀ 00006796 | «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ<br>ք. Երևան, Դրոյի 8/4<br>«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ<br>Հ/հ 24105020675400<br>ՀՎՀՀ 00889965 |
| Պետի առաջին տեղակալ Գ. Մովսեսյան | Տնօրեն Է. Հովսեփյան |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարման | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 18421170/2 | Գոտիներ | ցանկացած | **Գոտկատեղի կաշեգոտի** Արտադրվում է բնական կաշվից, 50 մմ լայնությամբ, լինում է 3 երկարության I չափսը - 1050 մմ, II - 1150 մմ, III - 1250 մմ: Ներսի կողմից մշակվում է բնական գույնի փափուկ կաշվով ձևավոր զարդակարով: Զարդակարի թելերը շականակագույն բնական մետաքսից: Գոտուն կարվում է հնգապատ երկսեպիկանի արույրե ճարմանդ, իսկ ազատ ծայրին լինում է անցք, ճարմանդի համար, | հատ | 5316 | 318960 | 60 | Ք. Երևան Պռոշյան 1-ին փակուղի 20 | 60 | Մինչև 15.05.2020թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պետք է ունենա մեկ գոտեմակող: Կաշեգոտու վրա պետք է դրոշմված լինի չափսը, արտադրող կազմակերպության անունը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը - ստվարաթղթե տուփերով, մեկ տուփի մեջ 5 հատ, տուփերը պիտակավորված, պիտակի վրա նշելով արտադրանքի անվանումը, արտադրող կազմակերպության անունը , չափսը, մատակարար կազմակերպության անունը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը | | | | | | | |
| 2 | 39511130/2 | Սավաններ | ցանկացած | **Սավան բամբակյա -17-133-84:** Գործվածքը 100% բամբակյա, 1 մ$^2$ մակերեսային խտությունը 140 գրամ՝ սպիտակեցված: Պատրաստի արտադրանքի չափսերը ( 120 X 214) սմ: Արտաքին տեսքը, համաձայն | հատ | 1320 | 264000 | 200 | Ք. Երևան Պողյան 1-ին փակուղի 20 | 200 | Մինչև 15.05.2020թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հաստատված նմուշի: Սավանի եզրերից մեկի անկյուններում պետք է դրոշմված լինի արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ - հակերով, հակերի մեջ 100հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 10հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Շեղումներն ըստ արտադրության տեխնիկական պայմանների: | | | | | | | |
| 3 | 35811180/2 | Հատուկ հանդերձանք և պարագաներ | ցանկացած | **Ակսելբանտ:** երկու մետաղյա ծայրապանակով, գործվում է ոսկեգույն մետաղական մանրաթելից,հյուսվածքով, հյուսվածքի ներքևի մասում ամրացվում է կոճակի օղակ , իսկ վերևից 6 սմ հեռավորության վրա | հատ | 15396 | 307920 | 20 | Ք. Երևան Պռոշյան 1-ին փակուղի 20 | 20 | Մինչև 15.05.2020թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կարվում է 6X3 սմ լեզվակ կոճակի անցքով: Կազմված է տարբեր երկարության կրկնակի գործվածքից: Գործված է երեք թելահյուսվածքով: Թելահյուսվածքի ծայրերը հանգույցակապված 4 հանգույցով,որից ամրացվում է մետաղից պատրաստված 9 սմ երկարության երկու հատ ծայրապանակներ: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**
**Պետական պահպանության ծառայություն**
**ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20**
**ՀՀ ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/h 900011004497**
**ՀՎՀՀ 00006796**

**Պետի առաջին տեղակալ** Գ. Մովսեսյան

**ՎԱՃԱՌՈՂ**
**«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ**
**ք. Երևան, Դրոյի 8/4**
**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ФԲԸ, Մալաթիա մ/ճ**
**Հ/h 24105020675400**
**ՀՎՀՀ 00889965**

**Տնօրեն** Է. Հովսեփյան

*Հավելված N 2*
*«      »           20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 18421170/2 | Գոտիներ | - | - | - | - | 318960 | 318960 | 318960 | 318960 | 318960 | 318960 | 318960 | 318960 | 318960 |
| 2 | 39511130/2 | Սավաններ | - | - | - | - | 264000 | 264000 | 264000 | 264000 | 264000 | 264000 | 264000 | 264000 | 264000 |
| 3 | 35811180/2 | Հատուկ հանդերձանք և պարագաներ | - | - | - | - | 307920 | 307920 | 307920 | 307920 | 307920 | 307920 | 307920 | 307920 | 307920 |

**ԳՆՈՐԴ**
**Պետական պահպանության ծառայություն**
**ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20**
**ՀՀ ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/h 900011004497**
**ՀՎՀՀ 00006796**

**Պետի առաջին տեղակալ** **Գ. Մովսեսյան**

**ՎԱՃԱՌՈՂ**
**«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ**
**ք. Երևան, Դրոյի 8/4**
**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ՓԲԸ, Մալաթիա մ/6**
**Հ/h 24105020675400**
**ՀՎՀՀ 00889965**

**Տնօրեն** **Է. Հովսեփյան**